Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 805 - Ա
որոշման

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱՐՄԱՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է աջակցել Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի սարքավորումների արդիականացմանը, ինչը կնպաստի միջազգային չափորոշիչներին համապատասխան դեղագետ մասնագետների պատրաստմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաքի, Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Երևան քաղաք, կրթական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 49,290,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևանի պետական համալսարան հիմնադրամ (Երևան քաղաք, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ՝ 01506928) |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2025 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2026 թվականի ապրիլի 30-ը |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նախատեսվում է Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Ֆարմացիայի ինստիտուտի գիտահետազոտական կենտրոնի համար ձեռք բերել և տեղադրել լաբորատոր սարքավորումներ: Իրականացվելու է 2025 թվականի դեկտեմբերի 24-ից մինչև 2026 թվականի ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ 49,290,000 դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Լաբորատոր սարքավորումների ձեռքբերման, մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 49,290,000 դրամի չափով, առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

22.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ